

**ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՆԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅ-ՈՒՄ**

**Կ. Ա. ԳԱԼՈՅԱՆ**

ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս միտումների և գիտելիքի վրա հիմնված գլոբալ տնտեսությունում մրցունակության ապահովման անհրաժեշտության համատեքստում այսօր խիստ արդիական է դարձել մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանությունը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, աշխարհի առաջատար տնտեսությունների աճի տեմպերի նվազումը, սպառողական զների բարձրացումը և համանման բազում այլ իրողություններ մեր պետությանը կանգնեցնում են նոր մարտահրավերների առջև: Այս պայմաններում մտավոր սեփականության պահպանությունը կարևորագույն պայման է նորարարության համար: Այն խթանում է հետազոտությունների ու զարգացումների ինստիտուտների ներդրումը և գիտելիքի տեղափոխումը լաբորատորիայից արտադրություն, արտադրությունից շուկա:

Սեփականությունը, լինի նյութական թե ոչ նյութական, որոշիչ դեր ունի շուկայական տնտեսության զարգացման համար: Սեփականության իրավունքները խթանում են նոր գյուտերի և այլ նորարարությունների ստեղծմանը՝ դրանց նկատմամբ սահմանափակ ժամանակահատվածով բացառիկ իրավունքներ տրամադրելով: Գիտելիքի վրա հիմնված գլոբալ տնտեսության մեջ գյուտարարության և նորարարության կարևորությունը՝ որպես մրցակցության խթան, աճում է:

Համաշխարհային տնտեսության զարգացման հեթոսական փուլը պայմանավորված է այն շեշտակի փոփոխություններով, որոնք պետք է իրականացվեն արտադրական տեխնոլոգիաներում կատարվող ներդրումների շնորհիվ:

ՀՀ-ում սահմանափակ բնական ռեսուրսների, աշխարհագրական դիրքի և տնտեսական ծանր վիճակի պայմաններում մեծ ուշադրություն պետք է դարձվի գիտական ներուժի զարգացմանը: Այդ գործում մեծ նշանակություն ունի մտավոր սեփականության օբյեկտների պահպանությունը և առևտրայնացումը: Պետք է նշել, որ մտավոր սեփականության պահպանությունը կարևոր պայման է նաև արվեստի և մշակույթի զարգացման համար:

Ինովացիաների էության, դրանց կազմակերպման մեթոդների, շուկայական պայմաններում պրակտիկ օգտագործման մասին վերջին տարիներին տպագրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես Ա. Վասիլևի, Գ. Կովալևի, Ա. Կազանեցևի, Լ. Մենդելի, Ն. Ֆոնշտեյնի, Ա. Բալաբանի, Վ. Մեդինսկու և Լ. Շարլակովի աշխատանքները: Հայրենական գիտնականներից այդ հարցին անդրադարձել են Ա. Մարկոսյանը, Բ. Եղիազարյանը, Յու. Մուվարյանը, Մ. Մելքումյանը, Ս. Դավոյանը, Գ. Խանիկյանը և ուրիշներ:

Մտավոր սեփականության օբյեկտների պահպանության փուլը ՀՀ-ում բնութագրվում է օրենսդրական դաշտի և դրա կիրարկման պրակտիկայի առանձնահատկություններով: Սկսած 1992 թվականից՝ օրենսդրությունը ենթարկվել է մի շարք փոփոխությունների, որոնք կատարվել են՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման առանձնահատկությունները:

Ազգային և արտերկրի փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում առ այսօր չի ստեղծվել մի մեխանիզմ, որը թույլ կտար շուկայնացնելու արտոնագրա-

յին վարչությունում գրանցված մտավոր սեփականության օբյեկտները: 1998-2003թթ. 1 մլն բնակչին ընկնող գյուտերի քանակության միջին ցուցանիշով Հայաստանը գերազանցում է այնպիսի երկրների, ինչպիսիք են Իսպանիան, Դանիան, Հունաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սլովակիան, Լեհաստանը, Հունգարիան: Ինչ վերաբերում է գյուտերի շուկայնացմանը, ապա Հայաստանում այս ցուցանիշը խիստ ցածր է: 2001-2002 թվականների ընթացքում Հայարտոնագրում կնքվել է ընդամենը երկուական, իսկ 2003 թվականին՝ մեկ իրավունքի զիջման լիցենզիոն պայմանագիր<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործընթացներում ամենահիմնական թերությունը մտավոր սեփականության օբյեկտի շուկայնացման բացակայությունն է: Մինչդեռ երկրի գիտատեխնիկական ոլորտը համարված է զգալի գիտատար ռեսուրսներով, որոնք մատնվում են անուշադրության<sup>2</sup>: ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից հրատարակվող «Արդյունաբերական սեփականություն» տեղեկագրի առ 01.01.2001թ. համարներում բերված տվյալների վերլուծությունից երևում է, որ 1173 արդյունաբերական սեփականության օբյեկտները բաշխվում են հետևյալ ձևով՝ 91.8%-ը գյուտեր են, 3.7%-ը՝ օգտակար մոդելներ, իսկ 4.5%-ը՝ արդյունաբերական նմուշներ: Մակայն, ցավոք, այս օբյեկտներից և ոչ մեկը ՀՀ-ում դեռևս չի ենթարկվել գնահատման:

ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության ստեղծման օրվանից (1992թ.) ապահովվում է միայն հաշվառման-արտոնագրման միասնական համակարգի գործունեությունը, իսկ ինչ վերաբերում է գնահատման գործունեությանը և գնահատման լիցենզիաների տրամադրմանը, ապա կարելի է նշել, որ ներկայումս Հայաստանում անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծվել այդ գործընթացը կազմակերպելու համար:

Հայարտոնագրում գրանցված արդյունաբերական սեփականության օբյեկտների շուկայնացման համար առ այսօր պետության կողմից չի կատարվել ոչ մի քայլ, որը կնպաստեր գործունեության զարգացմանը: Հայաստանի գործարարների մոտ բացակայում է գիտատար արդյունաբերության ոլորտ մտնելու հետաքրքրությունը, և դա է պատճառը, որ առ այսօր չի գտնվել մի անձ, որը համաձայնվի իրականացնել ֆինանսական ներդրումներ մտավոր սեփականության որևէ օբյեկտում: Մենք դա բացատրում ենք այն բանով, որ չկա այս գործունեությունը ուղղակիորեն կարգավորող օրենք, որտեղ կամրագրվեն դրա սուբյեկտները և դրանց միջև իրավահարաբերությունները: Այդ պատճառով գործարարները վստահ չեն, որ իրենց ներդրումները կլինեն արդյունավետ: ՄՍՕ արդյունավետությունը կարելի է որոշել առաջին հերթին դրա գնահատման միջոցով:

Հայտնի է, որ Արտոնագրային վարչությունը, ստանալով հերթական հայցը, վերլուծում է տարբեր երկրներում գրանցված նմանատիպ գյուտերի արտոնագրերը և որոշում է առաջարկվող տեխնոլոգիայի մակարդակը: Ինչ վերաբերում է դրա համեմատությանը նմանատիպ այլ տեխնոլոգիաները նկարագրող տեխնիկատնտեսական ցուցանիշների հետ, ապա ՀՀ-ում ոչ ոք դրանով չի զբաղվում:

Մտավոր սեփականության օբյեկտների գնահատումը ներկա փուլում այնպիսի խնդիր է, որ անհրաժեշտ է պետության միջամտությունը: Ներկայումս Հայաստանում չկա բավարար չափով ձևավորված մասնագիտացված գնահատողների

<sup>1</sup> Տե՛ս **Յու. Մ. Քաղոյան**, Չեռնարկության ինովացիաների կառավարման ռազմավարությունը (ՀՀ օրինակով), ատենախոսություն, Եր., 2005:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Մարգարյան**, Ինովացիոն գործընթացների հետազոտումն ու տնտեսամաթեմատիկական մոդելավորումը, ատենախոսություն, Եր., 2002:

ինստիտուտ, ինչը թույլ չի տալիս գտնել մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրներ: Հայաստանում գոյություն ունեցող հսկայածավալ մտավոր սեփականության օբյեկտների շուկայնացման խնդրի լուծումը խիստ անհրաժեշտ է:

Այս խնդիրներին լուծում տալու ճանապարհներից մեկը մտավոր սեփականության գնահատման կենտրոնի ստեղծումն է: Այսպիսի կենտրոնի համար գործունեության հիմք պետք է ծառայեն ՀՀ արտոնագրային վարչությունում մշակված, սակայն դեռևս ԱԺ-ում չքննարկված «Մտավոր սեփականության օբյեկտների գնահատման մասին» (2002 թ.) և «Մտավոր սեփականության գնահատման գործունեության մասին» (2008 թ.) ՀՀ օրենքների նախագծերը, «մտավոր սեփականության գնահատման ստանդարտներ» և մի շարք այլ իրավական ակտեր: Ի դեպ, պետք է նշել, որ համապատասխան օրենսդրական դաշտի առկայությունը շատ կարևոր է երկրի գիտական ներուժի պահպանման համար: Այսպիսով, վերը նշված օրենքների հաստատումը հրատապ է, այլապես եթե մինչ այժմ մենք ունեցել ենք վնասներ, ապա հետագայում դրանք մեծանալու են ոչ միայն ուրիշներին այդ իրավունքները վաճառելու, այլ նաև երկրի ներսում անհրաժեշտ ներդրումների բացակայության հետևանքով: Այս հարցում էական դեր է խաղում պետությունը, քանի որ մտավոր սեփականությունը պետության կարողությունների աճի վրա ներազդող արդյունավետ գործոն է, և այդ ոլորտի կառավարման հիմնախնդիրների նկատմամբ վերաբերմունքը պետության ընդհանուր իրավակարգի և վարվող տնտեսական քաղաքականության խոստովանումն է ու վարկանիշային այցեքարտը<sup>3</sup>:

ՄՍՕ շուկայնացումը ինովացիոն գործընթացի ամենաառանցքային խնդիրներից է, որի արդյունքներից են կախված տվյալ օբյեկտում իրականացվող ներդրումների արդյունավետությունը և հաջողությունը: ՄՍՕ առևտրայնացման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ՄՍՕ գնահատմանը վերաբերող և մտավոր սեփականության ոլորտում մասնակիցների հարաբերությունները կարգավորող օրենքներում մտցնել փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև հաստատել այդ ոլորտը կարգավորող արդեն իսկ մշակված վերոհիշյալ օրենքների նախագծերը:

Գիտատեխնիկական մշակումների (ԳՏՄ) առևտրայնացումը պետք է կարգավորվի հատուկ կանոնակարգերով և օրենքներով, քանի որ առ այսօր Հայաստանի Հանրապետությունում չկա ոչ մի օրենք, որով կարելի լինի կարգավորել առևտրայնացման գործընթացը: Հայաստանում լիարժեք պաշտպանված չեն մտավոր սեփականության իրավունքները, հաճախ ոտնահարվում են հեղինակային և հարակից իրավունքները, ՀՀ օրենսդրությունը ընդհանուր առմամբ կարգավորում է մտավոր սեփականության դաշտի հետ կապված հասարակական հարաբերությունները: Սրանից կարելի է հետևություն անել, որ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը կարգավորող օրենսդրական դաշտը թերի է:

Բազմաթիվ երկրների հետ համագործակցության պայմաններում մեր երկրի համար շատ կարևոր է համատեղ գործունեություն ծավալելիս կամ ձեռնարկություններ հիմնադրելիս ճիշտ գնահատել ներքին նյութական և ոչ նյութական պոտենցիալը: Գրականությունում հաճախ նկարագրվում է համատեղ ձեռնարկության ինովացիոն գործընթացի կազմակերպման դաշտը, որի ակտիվ մասնակիցներից են գիտնականները և գիտահետազոտական ոլորտում ներգրավված այլ

<sup>3</sup> Տե՛ս Հ. Գալստյան, Մտավոր սեփականության օրենսդրական դաշտի զարգացման և կատարելագործման հիմնախնդիրները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 2002, 12 (19) հոկտեմբեր, էջ 46-53:

աշխատողներ<sup>4</sup>: Կատարողների թվում նշվում են նաև փորձագետներ և մտավոր սեփականության գնահատողներ, և նկարագրում նրանց գործունեությունը համատեղ ձեռնարկություններում: Սակայն բացակայում են առաջարկություններ, թե համատեղ ձեռնարկության գործունեության առանձնահատկությունները ինչպես կարող են ազդել ՄՍՕ շուկայնացման վրա:

Համատեղ ձեռնարկությունների ձևավորման ժամանակ կարևոր է ճիշտ գնահատել մտավոր սեփականության ներուժը: Մտավոր սեփականության օբյեկտների պահպանման համակարգի անկատարության լավագույն օրինակ է «Նաիրիտ» ընկերության կողմից տեխնոլոգիաների փոխանցումը Չինաստանին: Տվյալ դեպքում հայկական կողմի փոխանցած միայն տեխնոլոգիայի արժեքը նվազագույնը 30.600.000 դոլար է, և անհրաժեշտություն չկար ապամոնտաժել գործող սարքավորումները<sup>5</sup>: Սակայն Հայաստանի կողմի միայն մտավոր ներդրումը կազմում է չինական կողմի նախատեսվող ներդրման 145%-ը: Սա արդյունք է մեր երկրում գնահատման համակարգի բացակայության, օրենքների անկատարության և պարզապես սեփական ներուժի նկատմամբ անփույթ վերաբերմունքի: Այս օրինակը եզակի չէ, ինչից հետևում է, որ համապատասխան քայլեր չկատարելու դեպքում պետությունը հետագայում շարունակելու է լուրջ վնասներ կրել:

Հայաստանի Հանրապետությունում վարվող տնտեսական քաղաքականության առանցքային հիմնախնդիրներից մեկը ոչ նյութական ակտիվների որոշիչ խմբի՝ մտավոր սեփականության հիմնախնդրի համալիր կարգավորումն է: Մենք կարծում ենք, որ առևտրայնացման գործընթացում ամենամեծ ուշադրությունը պետք է դարձվի եղած արտոնագրային համակարգի հետազոտմանը, առանց որի անհնար է կապ հաստատել նոր տեխնոլոգիա ստեղծողների և դրանց կիրառողների միջև: Չէ՞ որ արտոնագիրը, տեխնոլոգիական տեղեկատվությունից բացի, իր մեջ պարունակում է տեղեկատվություն հայտատուի մասին և հնարավորություն է տալիս կապեր ստեղծելու այն անձի հետ, որն իրավունք ունի տվյալ տեխնոլոգիայի նկատմամբ:

Վերլուծությունից երևում է, որ, իրոք, մտավոր սեփականության օբյեկտները պետք է հնարավորինս արագ դուրս բերել շուկա՝ չմոռանալով, որ գործ ունենք յուրահատուկ ապրանքի հետ, որի իրավական պաշտպանությունը, գնահատումը, լիցենզավորումը, շուկայնացումը և ներդրումը ունեն այնպիսի առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս հատկորոշել այդ օբյեկտները սովորական ապրանքներից: Հետևաբար, այդ օբյեկտների շուկայնացման գործընթացը պետք է տարբերվի սովորական ապրանքների շուկայնացման գործընթացից:

**К. А. ГАЛОЯН – Проблемы коммерциализации объектов интеллектуальной собственности.** – Обсуждая проблемы коммерциализации объектов интеллектуальной собственности, автор статьи показывает, что в нашей стране в данной области есть серьезные пробелы: неисполнительность в правовой системе, отсутствие общей системы оценки интеллектуальной собственности, отсутствие государственной структуры для выполнения этой оценки, отсутствие учета собственности для внедрения в экономику. Вследствие вышеуказанного государство терпело и терпит экономические убытки. Без непосредственного его участия и принятия серьезных мер с его стороны государство будет продолжать терпеть убытки.

<sup>4</sup> Տե՛ս **Ա. Մելիք-Քարամյան**, Հայաստանի համատեղ ձեռնարկատիրական դաշտի տեսագործական որոշ գնահատականներ, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 2006, 9(73) օգոստոս, էջ 67-68:

<sup>5</sup> Տե՛ս **Վ. Գևորգյան**, Մտավոր սեփականության կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, Եր., 2006: